


Th. Lipsius

Geographie der  
Sowjetunion 1969

891.99.092  
6-79



ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

ԴԱՐՍԿԱՅԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ

ԴԱՐՍՁՐՁՈՒԾ . — ԱՃՈՒՂ ԴՈՒԼ ԷԿԱԶ . —  
ԱՃՈՒՂ ԴՈՒԼ ՄՐՁՈՒԽՆԻ . — ԱՐԴԻՆ ՕՋԼԻ  
ՀԱՅՐԱՊԵՏ . — ԴՈՒԼ ՍԱՐԳԻՍ ԶՐԻՃԿԱՆՑԻ . —  
ՍԿՓԱՆ ՕՋԼԻ ԴՈՒԼ ՂԱԶԱՐ . — ԵՐԳԻՉ  
ՏԵՐ-ԵՍՈՑԻ . — ԱՆՑԱՅ ԱՃՈՒՂՆԵՐ .

ԹԻՖԼԻՍ 1930



ան «ՓԱՐՈՍ» ԹԷՇԹՈՒ

- 6 NOV 2011

351.99.092

5 - 79

Հ' ՄԱՏԵՆԱՅԱՐ «ՎԵՐԵԺՆՈՒԽԻ» — ի Թի 2.

ՀՀՆԹԻՇ ԱՄՍՈՐԵԱՅ  
ՀԱՅԱԴԻՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

Տարեկան 1 սթեղինդ

Դիմել՝ Réd. de la Revue «Hendes Amsory»  
VIENNE (AUTRICHE) VII, Meehitaristengasse

Բ Ա Զ Մ Ա Վ Հ Կ Պ

ՔԱՆԱՄԻՐԱԿԱՆ — ԳԻՑԱԿԱՆ — ԲԱՐՈՅԱԿԱՆ

Տարեկան 3 տոլար

Դիմել՝ Rép. de la Revue „Pazmavet”

St. Lazare VENISE (ITALIE)

Զ Ա Բ Ա Ր Թ Ն Ո Յ

ՊԱՐԵՐԱԹԵՐԹ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵԱՏԻ

Տարեկան տասը թիւ 3 տոլար

Դիմել՝ Grand Palouian

B. P. № 50 PARIS (10e)

Հ Ա Ց Գ Ի Ն

ԿԱՊԱՄՍՈՅՑ ՀԱՅԱԿԱՆ

Տարեկան 75 ֆրանք

Դիմել՝ Réd. „Hay Gin”

Mme Hayganoueh Mark

Péra B. P. 192. STAMBOUL

Վ Ե Ր Ա Ֆ Ն Ո Ւ Դ

ՀԱՄԱՐՈՎԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ Ա Բ Ա Խ

ՀԱՐԻԵՑԱԿԱՆ

Զոյգ շաբաթաթերթիր

Տարեկան 5 տոլար

Դիմել՝ Réd. „Veratznound-Bobokh”

Haig Karakache

TEHERAN (PERSE)

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

ԱՐԱԿԱՆԱՅ ԱԾՈՒՂՆԵՐ

ԴԱՐԱՐՁԱՆՔ. — Ազուղ շուկ էֆաջ. —  
Ազուղ շուկ սրչունե. — Աթին օզլի  
ՀԱՅՐԱՊԵՏ. — Ղուկ սարդիս զրիզունցի. —  
Սէֆս օզլի շուկ շաշար. — ԵՐԳԻԶ  
Տէր-եսաթ. — Անաս ազուղներ.



Տպարան «ՓԱՐԱՍ» Թէ՛ՇՐԱՆ

# ՊԱՐՍԿԱՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ

I.

## ԴԱՐԱՀՐՁԱՆԸ.

17-19-րդ դարի երկրորդ կեսը։ Ահա այն ժամանակաշրջանը, որի մէջ ծնունդ են առել Հաբաւային Պարսկաստանի աշուղները։

Այդ պատմաշրջանը պարսկահայ պատմութեան մէջ խիստ ուշագրաւ և հետաքրքրական մի լրջան է, և կազմում է նոր-Զուղայի մտաւոր վերածնութեան ոսկեշրջանը, որովհետեւ այդ դարումըն է, որ սկսում է գլուզցական, տպագրական և գրական մի նոր շարժում, որը հետզհետէ նոր փայլ է ստանում։ Այդ դարումն է, որ Խաչատուր Կեսարացի և Զուղայեցի Սիմէօն վարդապետների ջանքերով հիմնում է նոր-Զուղայի ամենաառաջին դպրոցը, որն իր բոլոր ոյժով ծառայում է պարսկահայ գրականութեան դպրոցացմանը։ Այդ դարումն է, որ յիշեալ գլուզցի հիմնադիր՝ Խաչատուր Կեսարացին, իր ընկերների հետ, նոր-Զուղայի գլուզում հերսուական ջանքերով տառեր է ձուլում, մամուլ շինում և հիմք դնում պարսկահայ տաղին տպարանին (1640)։

Մտաւոր շարժման այդ դարաշրջանումն էլ ահա ժողովրդի ծոցից գուրս են գալիս պարսկահայ աշուղները։ — Չուլ Էգաղ, Հուլ Սրդունի, Թագէր օղլի, Ամիր օղլի, Հուլ Յովհաննէս, Սրդին օղլի Հայրապետ և ուրիշներ, որոնք իրենց սպերի և չօնդուների վրայ հնչեցնում են աշուգահան երգը։ Երգում են նրանք ժամանակաշրջանի քաջարական անցյալը, ժողովրդի տառապանքներն ու վշտերը, քարոզում են կրօնա-քարոյական սկզբունքներ, երգիծում են և մտքակում ժամանակի լնտանեկան կեանքը, տիպերը, նկարագրում զարիպի կետնջի գտանութիւնները և վերջապէս զրւատում երենց եաբերի սէրն ու գեղեցկութիւնը։

Ճիշդ է, որ նրանք առաջնակարգ աշուղներ չեն, ինչպէս մեր միջնադարեան երգիչները՝ Կոստանդին Երզնկացի, Յովհաննէս Քուրանցի, Ղաղար Սեբաստացի, Գրիգորիս Աղթամարցի, Նահապետ Քուշակ և ուրիշներ, ստիայն նրանք էլ ներկայացուցիչներն

(5157-56)



11033-57

են իրենց շրջանի կեանքի, նրանք էլ մեր գրականութեան մէջ ժամանակին կատարել են որոշ դեր և որ գլխաւորն է նրանց երգելի մէջ անկարուսա է մնում նոր-Զուղայի բարբառը, որ կրում է ամբողջ երեք դարի նկարագիրը: Ահա այդ տեսակէտներով նրանք արժանի են ուշադրութեան:

Սակայն ցաւօք պիտի նկատենք, որ այդ աշուղների մասին գեռ ոչինչ յիշւած չէ մեր բանահիւսութեան պատմութեան մէջ և մինչև այսօր ոչ նրանց երգերն են հաւաքւած մի ամբողջական հատորի մէջ և ոչ էլ նրանց վերաբերեալ կենսագրական լրիւ տեղեկութիւններ են լոյս տեսած. նրանք զրիթէ մոռացւած են:

Ահա այդպիսի աշուղներից են Դուլ Եգաղ, Դուլ Սրգունի, Սրգին օղի Հայրապետ, Մէփան օղի Դուլ Հաղար, Դուլ Սրազի Շըրշէլանցի. Տէր-Եսայի: Գծենք այստեղ նրանց պատկերը\*):

II

Ազոհ Դուլ Եգաղ

« Դուլ Եգաղ և Դուլ Սրգունի,  
Եշպնու երկու մեծ սիւնին.  
միշտ իւրեանց բանիւ ձէն ունին,  
Հարուստ Ճնորհալու նման:»

1. Կեսանը: Պարսկահայ աշուղներից ամենահինը՝ Դուլ Եգաղն է: Դժբախտաբար այս երգչի կեանքի և գործունէութեան մասին չկայ ոչ մի յիշատակագիր, ոչ էլ մեր ժամանակակից ծերունիները մի բան իմանում են նրա մասին, այնպէս որ դժւար է երգչի մասին դրական որևէ է կարծիք արտայայել: Տապանաքարից միայն, որը նրա ժամանակի մասին միտի յիշատակագիրն է, յայտնի է, որ նա սնւել և մեծացել է նոր-Զուղայում, Ժէրդ դարի երկրորդ կէսերին, այն է մօտաւորապէս 1650 թիւն: Իսկ նրա հատ ու կաոր երգերը, որոնք այսօր ունենք մեր ձեռքի տակ, ցոյց են տալիս, որ նա ծանօթ է եղել աշուղական տրեստակն և ունեցել է քերթողական շնորհը ու իրին աշուղ-երգիչ՝ շնորհութ ձեռքին շրջելով գիւղից գիւղ և տարածելով ժաղովրդի մէջ իր հեղինակած երգերը, որոշ դեր է կատարել իր ապրած միշտավայրում:

\*) Այդ աշուղների տպագրութեան ծախսը սիրով յանձն առաջ ։ Վերածնունդի խմբագիր՝ Հայկ Գարագար, որին յայտնում ենք մեր շնորհակալութիւնը՝

Վախճանւել է նոր-Զուղայում 1734 թիւն: Նրա տճիւնն ամփոփւած է նոր-Զուղայի հայս Գերեզմանատանը \*), որ զանում է կտմքչի հարաւային կողմը, մօտաւորապէս քսան և վեց քայլ հեռաւորութեան վրայ: Դա անշուր մի հողակոյտ է և կրում է իր վրայ փոքրիկ ու անդարդ մի քար, որի ցածի մասում քանդակւած է երգչի նկարը, որ հապատ և խրոխտ կանգնած ու չօնդուրը կրծքին դրած՝ նւագում է. նրա աջ կողքին զրւած է մի գինու չիշ և մի բաժտի, իսկ բարձր վերելի մասում, ծաղկանը կարի տակ, վորագրւած է այսպէս:

Ոզ իւր Աստուածն կուսիրէ,  
Մի հայր միրիւ տա սղորմի,  
Դուլ Եգաղս քարին աշուղի,  
Յաշիարս բան եկի, գնացի,  
Փոքրիկ բանէր ես դովեցի,  
Որ ի ձեղ յիշատակ լինի,  
Որք առէր ինձի տէրն սղորմի,  
Յաւուր մեծի գատաստանի:  
՚ի թվո ձԶԳ Ատա

2. Երգերը: Չնայելով, որ Դուլ Եգաղի գավթարը կորսւած է, բայց նրա երգերից մի քանիսը կտոր կտոր պահուած են այս ու այն ձեռագիր տեսակաների մէջ, իսկ մէկը՝ «2կար դարդ իմացող» տպագրւած է «Սիօն» ամսագրի մէջ (1874, թիւ 10, էջ 225, երուսալէմ):

Եգաղի անտիպ երգերէց առայժմ մեր ձեռքի տակ ունենք, ընկամենը վեց հատ, որոնց բավանդակութիւնից կարելի է որոշ գաղափար կազմել աշուղի գացումների և հայեացըների մասին: Այսպէս, նրա մի երգից երկում է, որ երգիշն շատ է վայելել աշխարհիս հրապոյրները և ընդհակառակը թերացել է իր կրօնական պարտականութիւնների մէջ: Եւ նա վերջին օրերում պատկերացըներով աշքի առաջն իր անցեալ կեանքը, զգում է, որ ինքը շատ մեղաւոր է, ուստի աղերսաւոր ու պաղատագին շեշտերով իր մեղքն

\*) Գերեզմանատանը գտնում է նոր-Զուղայի հարաւային կողմը, 1/3 Փարսիսի հեռու, Սօֆի կոչւած ժէռոս ուարի ստորառում:

Է լալիս Աստծուն և թողութիւն է հայցում:  
 Վայ իմ յետին օքն դատաստանին,  
 Մեղայ քեզ տէր Աստւած, մեղաւոր եմ ես,  
 Փոշման եմ ես իմ արած բանէն,  
 Մեղայ քեզ տէր Աստւած, մեղաւոր եմ ես:

Անշափ ուտելով ու շատ քնիլով,  
 Բամբաս առնելով, խեղճին զրկելով,  
 Մեղաց ծով եմ գարձէլ՝ ականջ զնելով,  
 Մեղայ քեզ տէր Աստւած, մեղաւոր եմ ես:

Թացի կրօնական մօտիւից, էպաղի քնարը հնչեցը է նաև  
 սիրոյ լարը, որից ուշադրութեան արժանի է «Սիրահարի երգը»,  
 որի մէջ աշուղը վառ գոյներով նկարագրում է իր սիրոյ աստիճա-  
 նը: Այդ երգից երեսում է, որ էպաղի ունի իր պաշտամունքի առար-  
 կան, իր կեանքի իդէալը, որին սիրում է ջերմ սիրով: Եւ նա  
 արենեան գունեղ պատիերացումով զովում է ետքին և զրւատում  
 նրա գեղեցկութիւնը:

Ի՞նչ պանչուկ, ի՞նչ բերան ա, կեաքնի մարգարիտ դանայ,  
 Երեսդ լուսնի նման ա, բարդ ու բոլոր ա սահղծել...  
 Հըեղէն աս, աշխարքումս չկայ քեզ նման,  
 Հողեղէն աս, աչ զին ունիս, աչ իման:

Այսպէս, երգիչն աշխարհում չի գտնում իր սիրածի նմա-  
 նը, և նա այդպիսի մի չքնաղ եարի սիրոյ հրդեհով բանկած, ընկ-  
 նում է երազնեսի ու յոյսերի մէջ և օր ու գիշեր ապրում և առե-  
 ջւում նրա սիրովը: Թաց շուտով մարում են նրա անուրջներն ու  
 որոնումները: Ջուտով նրա ուրախութիւնը փեխում է ախրութեան:  
 Նա սարսափով զգում է, որ իր «լուսին» եարը չի սիրում իրեն:  
 Այդաղից ահա աստղանում են հոգեկան տագնագներն ու գալա-  
 րումները. մի անոահման թափիծ սկսում է իջնել նրա սրտի և  
 հոգու վրայ. այլևս խամբում են նրա բոլոր յոյսերն ու երազները  
 և սկսում ատնջանքի դառն օրերը: Խորը վատից նա դառն ու  
 տրտում լալիս է, այնքան է լաց լինում, որ նրա արտասունքնե-  
 րից գետեր են կադմուում:

Յասկի լացի՝ արտասուքս զետ-զետ ա,  
 Յուշ ու միտքս, զին ու իմանս քեզ հետ ա:  
 Թայց վերջը երգիչն իմանում է, որ եարն ամուսնութեան  
 նպատակ չունի, նա նուիրուած է Աստծոյ տաճարին, ուստի հաշտե-  
 լով իրերի զրութեան հետ, բացականչում է.

Նոր իմացայ, որ քո միտքն էլ աշխարհի չի,  
 Հալբաթ-հալբաթ ոտ մի կարել ժամկիցն:

Այնուհեաև աշուղն իրեն դգում է մենմենակ. նրա զգայուն և  
 քնքոյց սիրաը մնում է շղթայւած ու կաշկանգւած, մի զրութիւն,  
 որ ազգում և խոր կնիք է զնում աշուղի զգայուն հոգու վրայ և  
 այլեն նա մշ մի բանից ուրախութիւն չի զգում. անվերջ մի ցաւ  
 ճընշում է նրա սիրաը և նա գառն մորմորով ու թախծոտ շեշտե-  
 րով պատիերացնում է իր հոգեկան վիշտը.

Զկայ զարդ իմացող, ասող ու լսող,  
 Գոյ նստի, զլուց տայ, բանայ էս սիրան,  
 Մին զամն ծերաման ա, աշխարհս մոռաման,  
 Մին զամն թազայ նօվ ջվան ա էս սիրան:

Եւ թէս անցնում են օրեր, բայց և այնպէս սիրոյ կրակը չի  
 հանգչում աշուղի հոգու մէջ: Սիրոյ զօրութիւնից նրա սիրտն  
 երբեմն տաքանում, բոց կրակի նման է վառում, երբեմն էլ հովա-  
 նում է և սառում.

Մին զամն տաքաման ա, մին զամն սառման,  
 Մին զամն բոց կրակի նման ա վառման,  
 Մին զամն յիտ խովաման ա, էս սիրան:  
 Այսպէս սէրն անվերջ փոխում է աշուղի սիրաը և նա դառնա-  
 զին շեշտով հարց է տալիս իրեն.

Զուլ էպաղս, ընշնոր նման ա էս սիրան:

Եղբափակենք մեր խօսքը Զուլ էպաղի մասին: Նրա կեանքը և գրա-  
 կանհասարակական գործունէութեանը, ինչպէս ասացինք, թագւած-  
 է խոր մթութեան մէջ: Աւելին: Նա համարեայ մոռացւած է, իսկ թէ  
 մոր են գառնում նրա միւս երգերը, այդ մեզ յայտնի չէ. Ծերես մի օր,  
 այդ երգերը, պահւած ձեռագիր տակարաններից երեան դան,

սրոնցով գուցէ կարողանանք յայտնագործել աշուղի կեռնքի բնութագծերը։ Այժմ այսքանը պարզ է, որ նա աշուղական ձիբով օժտւած մի երգիչ է եղել և հանգիստացել իր ժամանակաշրջանի և միջավայրի յայտնի աշուղներից մէկը։ Ասպարէզի վրայ յայտնը՝ ի է նա Պարսկաստանի հայ աշուղների ամայութեան օրերում և իր սազով յատուկ և որոշ ուղղութիւն է տւել Պարսկահայ աշուղութեան, իսկ իր երգերով սկիզբ դրել Պարսկահայ աշուղական պրականութեան։

Այսօր նա, իրսկ հնագոյն աշուղ հանգիստանում է Պարսկահայ աշուղական դպրոցի ամենաառաջին սահմիթան։

*Մատենագրութիւն։ Աշուղ Ղուլ Էգազի մատենագրութեան պատկերն է.*

- 1) «Յուշիկը հայրենիաց հայոց» Ալիշանի 1 էջ 124),
- 2) «Սիօն» (1874, թիւ 10, էջ 225, Երուսաղէմ),
- 3) «Զանդ» (1919 № 37 և 44, Թաւրիդ),
- 4) «Պարսկահայ աշուղներ» (1920, Նոր-Հուդա, թ.)
- Պրական, 5) «Վերածնունդ» (1930 № 9-28 Թէհրան, Հայկ Դարագաչի Խմբ.)։

Փըանիներ Ղուլ Էգազի երգերից  
1. Մեղայ

Պայ իմ յետին օրէն գատաստանին,  
Մեղայ Քեղ Տէր Աստուած, մեղաւոր եմ ես.  
Փոշման եմ ես իմ արած բանէն,  
Մեղայ Քեղ Տէր Աստուած, մեղաւոր եմ ես։

Բերանս սաւորէլ ա վատ յուշոնց տալով,  
Մրաքս ծռուէլ ա ժամ չգնալով.  
Մեղը ամ գործէլ, դասէլ կաղերով,  
Մեղայ Քեղ Տէր Աստուած, մեղաւոր եմ ես։

2ունեմ զղմունք, արտասունք ու լաց,  
2եմ տուէլ աղքատին և նշ մի ճադթ խաց.  
Մարմինս պայծառ ամ պահէլ, խեղջ հողիս զրկած,  
Մեղայ Քեղ Տէր Աստուած, մեղաւոր եմ ես։

Մեղայ չեմ տուէլ, որ առնեմ թողութիւն,  
Վայ ինձ, ես դժբ կտեսնեմ արքայութիւն.

Մեղաց բանն եմ դարձէլ չարագործութիւն,  
Մեղայ Քեղ Տէր Աստուած, մեղաւոր եմ ես։

Խոնարհ չեմ կացէլ Աստուած հրամանին,

Մշտապէս գնացէլ հատ մեղաց բանին.

Վայ ինձ, թէ ինչ ջուղար կ'աւամ ես գատաստանին,

Մեղայ քեղ Տէր Աստուած, մեղաւոր եմ ես։

Անշավ ուտելով ու շատ քնելով,

Քամբաս առնելով, խեղջին զրկելով,

Մեղաց ծռվ եմ գարձէլ ականչ գնելով,

Մեղայ քեղ Տէր Աստուած, մեղաւոր եմ ես։

Մեղքս շատացէլ ա քան զգետ ու ծռվ,

Մեղաց ծռվ ամ գարձէլ ոստավ ու ճղկով,

Մեղուցեալ եմ ես ձեռքով ու ոտքով,

Մեղայ քեղ Տէր Աստուած, մեղաւոր եմ ես։

Ծումս կերէլ ամ, չեմ պահէլ պասն,

Ուրախացրէլ ամ սատանի զասն.

Ես արժան չեմ ճշշակել սուրբ մատն,

Մեղայ քեղ Տէր Աստուած, մեղաւոր եմ ես։

Կիրակի օրն պատուէր ա զրած,

Օրէնք ամ կոտրէլ, հարգիզ չեմ պահած,

Խեղջ Ղուլ Էգազ, դու քո մեղքին լաց,

Մեղայ քեղ Տէր Աստուած, մեղաւոր եմ ես։ 1)

2. Հողից, Ջրից

- 1) Հողից, Ջրից, կրակ, քամուց, 2) Ի՞նչ պանչուկ, ի՞նչ բերան ա, Քեղի Տէրն դժբ ա ստեղծել. Կեսքնդ մարգարիթ դանայ,  
Ակամա զարմի նման չեմ միթէ, Երեսդ լուսնի նման ա,  
Քեղի նոր ա ստեղծել. Բարդ ու բոլոր ա ստեղծել։

1) Մի ուրիշ ձեռագիր օրինակում կայ հետեւալ տունը.

Ունափս մեղայ՝ շաբ հանաղարն զնացի,  
Անզգամ մարդկան պէս անհաւատ շնացի,  
Եմ ամենօրեայ մեղքս մին օր չլացի,  
Մեղայ քեղ Տէր Աստուած, մեղաւոր եմ ես։

- 3) Եալաբ ովկ կերնի քո տէրն,  
ովկ հենք առնի, առսնի խէրն.  
Թիկնամիջիդ թուխ ծամնըն.  
Ուլոր մուլոր աստեղծել:
- 4) Աշխարհքումս ինչ սիրուն կայ:  
Էնդօնք կելնեն քեզ խար ու փայ:  
Դառնաս էնդոնց միջումն շահ.  
Քեզ թագաւոր աստեղծել:
- 5) Ղուլ էպազս տևսաւ, սառէց,  
Նազ ու զամդէտ հոգիս առէց,  
Մէրդ ընկաւ՝ սիրտս վառէց,  
Քեզ հրեղէն աստեղծել:

3. Կշտիս նստել աս

Կշտիս նստել աս, լալման;  
Տալման աս գաստուրն, ինչ անեմ.  
Ո՛չ խօսման աս, ոչ խօսացնում,  
Ես քէ պէս խուրն ինչ անեմ:  
  
Դու կշտիս նստել աս լալման,  
Ես քո յէշխիցն ամ խալման.  
Խօսման ամ, ջուղաբ չես տալման,  
Դէմ բանում աս նուրն, ինչ անեմ:

Ելի, այ բիմօրվաթ, արի,  
Անկոճ մի դնել օտարի,  
Ես ծարաւ, զու բանցը սարի,  
Փէ նման աղքուրն ինչ անեմ:

Ճիլացուցէլ ա քո սէրն,  
Սրախս տվէլ աս նետէրն.  
Գնամ ընկանեմ գետերն,  
Զի տանում ջուրն, ինչ անեմ:

Ղուլ էպազս խօսեմ հանակօվ,  
Ջուղարս տալման քամտկօվ.  
Ես մատաղ քեզի՝ դանակօվ  
Զի կարում թուրն, ինչ անեմ:

4. Արի նշանաբան տամ  
Ելի, նշանաբան տամ, տեսնեմ մտնիդ ա,  
Բաղչի միջի սազ ու սօհրաթ զամերով.  
Ենձի տեսիր՝ փախար, մտար ուստիսին,  
Ականում իր կարմիր, կանաչ ջամերով:

Հրեղէն աս, աշխարքումս չկայ քեզ նման,  
Հողեղէն աս ոչ դին ունես ոչ իման.  
Ընդուր ամ ես էսքան գնաման, գոլման,  
Սիրս չեմ կարում էդ քո լիզուի լամերէն:

Բասկի լացի՝ արտասուրս գետ-գետ ա,  
Ցուշ ու միաքս, դին ու իմանս քեզ հետ ա.  
Ղուլ էպազս էլ սար սարի չի,  
Հաւալէն պէս էլ աշքս օտարի չի:

Նոր իմացայ, սր քո միաքն էլ աշխարհի չի,  
Հալբաթ-հալբաթ սոս մի կտրել ժամիցն:

5. Ջաֆէտ բաշել ամ

Ջաֆէտ բաշել ամ, թուքդ լսել ամ,  
Յալդայ միծացել աս, ուրիշ եայր ունես.  
Ջանս դուս ա հկել՝ բօյդ տեսել ամ,  
Ջնորքդ չիմ լորար, ինչ խունար ունես:  
Դու ջանէլ աս, հաէլ աս, հայեայ չունես ամանչես,  
Աշխարքս ման զոս ինձնէ էլ գաման չիս,  
Ցերեկն վաղայ կատա, դիշերն տանն չիս,  
Մզամ զէրազ ինձ էլ զրֆտար ունես:

Քո սէրն կրակ ա իմ սրտումն վառ,  
Դէ եկ, ինձ սպանիր, մին խետ հոգիս առ,  
Դու մինթա ձուղ իր, քե չինէլ ամ ծառ,  
Պտուղդ կերէլ չեմ, ինչ նուրար ունես:

Թասկի լացի արտասունքս ա գիտ-գիտ  
Դէրադ քէյ էլ ում կսիրեմ էսաի հետ.  
Դու մին զաստայ ծաղկի եռ յամէն սհաթ մէկի հետ,  
Մեղայ Սստուած, թէ ախտիրաբ ունիս:  
  
Զուլ էգաղիս զարդը շատ ա,  
Ասում չի մուշտագ ամ.  
Զբուց տամ, ինձ խետ խօսում չի,  
Քանի խրատամ ամ, ինձ լսում չի.  
Յալդայ ձեռ վեռի, էլ ախտիրաբ չունիս:

6. Զկայ լարդ իմացող\*)

Զկայ<sup>1)</sup> զարդ իմացող, ասող ու լսող,  
Գոյ նստի, զրուց տայ, բանայ էս սիրան,  
Մին դամն<sup>2)</sup> ծերաման ա, աշխարհս մոռաման,  
Մին դամն թաղայ նոյ ջվան ա, էս սիրան:  
  
Ազամորդուս սիրան ճնճի նման ա,  
Մին դամն զաֆասումն ա, մին դամն թուման ա,  
Մին դամն թարեան ա, մին դամն Յաշտարխան,  
Մին դամն հրէն չնդստան ա, էս սիրան:  
  
Ազամորդուս միտքն շտու ա ուլոր մուլոր,  
Մին դամն գոհար շնաս<sup>3)</sup>, սին դամն ճգնաւոր,  
Մին դամն զանձ խաղինով ազնիւ թագաւոր,  
Մին դամն աղքատ փէրիշան ա, էս սիրան:  
  
Մին դամն չար ա գործում, մին դամն բարի,  
Մին դամն ազօթք անում վասն աշխարհի.  
Մին դամն ումբը ա խնդսում չուր հազար<sup>4)</sup> տարի,  
Մին դամէն յետ փոշիման ա, էս սիրան:  
  
Մին դամն ծախման<sup>5)</sup> ա, մին դամն առման,  
Մին դամն ատքաժան ա, մին դամն սառման,  
Մին դամն բաց կրտի նման ա վասման,  
Մին դամէն յետ խովաման ա, էս սիրան:

\* ) Առաջին առգամ լոյս է տեսել , Սիօն<sup>6)</sup>-ի մէջ , Սրբա մարզոյ<sup>7)</sup> խորսով  
(1874 էջ 225): „Սիօն<sup>8)</sup>-ի և անը ձեռազբի էսկան ատքերութիւններն են . 1) 2) 3) 4) 5)

Մին դամն իմանն կէս զիան կը ծախի,  
Մին դամն Աստուած միտ կրբերի, կըվախի.  
Մին դամն Սմարտնգ<sup>9)</sup> ա, մին դամն Բիանի,<sup>7)</sup>  
Մին դամն չնկստան ա, էս սիրան:

Մին դամն ֆքսով խալիսի տալման ա աղար,  
Մին դամն աշխարհ համայն չի բերում նազար  
Օրն մին ա, Փիրըն խէրուր<sup>8)</sup> հազար,  
Զուլ էգաղս, ընշանը նման ա, էս սիրան:



6) Գետնչայ, 7) Երբուլան, 7) Ջամալսի, 8) Փրցն լափ հարիւր:

ԱՃՈՒՂ ՂՈՒԼ ԱՐՁՈՒՆԻՒ

Պարսկահայ աշուղների շալքում ուշազպութեան արժանի է Ղուլ Սրգունին, որի մէ կինսագրութիւնն է յայտնի, մէ ձնընդեան և մահան թւականները. միայն այս քանը ծանօթ է մեզ որ նա ապրել և գործու է Ղուլ Եգաղի ժամանակաշրջանում, Ժերոբ դարում (իր 1650-1750):

Ծերունիների տսելով՝ նա մի անպաճոյն աշուղ է եղել բայց իր բանաստեղծական ձիբռով և իմաստութեամբ սիրելի է դարձել իրեն շվապատողներին: Մանկութիւնից ոսվուել է աշուղութեան արւեստը և միաժամանակ երգեր ու բանաստեղծութիւններ է գրել Ղուլ Սրգունի մականունով, որոնք հաճոյքով են կաբդացւել իր ժամանակակիցներից:

Թէ ինչպէս է առաջացել նրա մէջ աշուղութեան սէրը և թէ ինչ պայմանների մէջ կազմակերպւել է նա իրեն աշուղ, այդ մասին ոչինչ չգիտենք:

1921 թւին Վիեննայի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի գլուխը աչքէ անցկացնելիս՝ երստադէմում հրատարակւած «Սիօն» ամսագրի (1874 թիւ 10, էջ 225) մէջ գտանք համառօտ մի յօդւած Ղուլ Եգաղի և Ղուլ Սրգունու վելաբերեար որի մէջ սակայն, տարաբախտաբար, կինսագրական ոչ մի տեղեկութիւն չ'գտանք. այնահեղ յօդւած ազիրը պարզապէս զբաղւում է նրանց անունների ստուգաբանութեամբ: Աւելորդ շնչք համարում տալ այստեղ այդ յօդւածի էտական մասը.՝

«Երգիչներն Զուղայեցի են, և միը միւս ազգային երգ չաց շատերուն նման սոցա անունն ես բոն երգչական անուն և Ղուլ Եկաղ և Ղուլ-Սրգունի: Ղուլ՝ ծառայ կընշանակէ, Եկաղ անհասկանալի է, իսկ Սրգունի, որ արզ բառէն է, կընշանակէ՝ փափաք, խնդրւածք, ոէր. հետեապէս Ղուլ-Սրգունի՝ կընշանակէ ծառայ սիրոյ, ծառայ խնդրուածք: Ահա երգիչներ, որ ծառայ համարած են իրենց անձն. ծառայ ժողովրդի առջե երգելով, ծառայ սէր և վիշտ նւազելով, ծառայ խրատներ և յորդորներ տալով՝ իրենց բնաբւեստ քնարով»:

Իսկ Ալիշանը «Յուշիկը հայրենեաց հայոց» մէջ [էջ 124] զբում է այսպէս.

« Բուն Զուղայեցց մէջ կու յիշին Եգաղ» Արզունի, Բագէր օղլի, Ղուլ Սարգիս Ջրիշկանցի, Ամիլ օղլի, Վանվան, Ղուլ Յովհաննէս, Պետրոս Զուղայի, և այլն»:

Այս յիշատակարաններից երեսում է, որ Ղուլ Սրգունին ծընւել է նոր-Զուղայում, ուր, անշուշտ, սաացել է իր սկզբնական կրթութիւնը. հաւանականաբար ուսել է նոր-Զուղայի Ս. Ամենափրկչեան վանքում կամ ժամանակի յայտնի գրագէտաներից մէկի ժօտ: Իսկ նրա մի քանի երգերը ցոյց են տալիս, որ նա մի որոշ ժամանակ ապրել է հայրենի օջախից հնուու, պանդխառութեան մէջ, եղել է զլիաւորապէս Կալկաթայում և Բանգալայում: Թէ ինչը բան ժամանակ է պանդխառել և ինչ գործունէութիւն է ցոյց տւել, տեղեկութիւններ պահառում են: Յայտնի չէ մեզ նոյնպէս թէ որ սպառ հողի տակ հանգչում են այսօր նրա աճիւնը:

Երգերը: Ճատ չէ Սրգունու բանաստեղծութիւնների թիւը. նրա քնարից մեր ձեռքը հասել են բնդամենն ութը քերթւած, որոնց պատկերը հատկանի է.

«Մեղայ տէր», լոյս է տեսել 1845 թիւն, Կալկաթայում, յայտնի գրականագէտ-խմբագրի Մհորոպ Թաղիաղեանի «Ազգաւէր»-ի (թիւ 19, էջ 152) մէջ:

2) «Ղարիպ տեղ նաշաղ ամ», տպագրւել է մի քանի անգամ տուաջին անգամ լոյս է տեսել 1846 թիւն, Թաղիաղեանի «Ազգաւէր»-ի (թիւ 21, էջ 7) մէջ, տպա հրատարակւել է 1875 թ. երուսաղէմի «Սիօն» ամսագրի (թիւ 1, էջ 18) մէջ, յետոյ տպագրւել է 1911 թ. կղմիրում, Տրղատ Եպիսկոպոսի. Պալեանի «Հայ Աշուղներ»-ի [Ա. հատոր, էջ 263] մէջ, իսկ 1921 թիւն լոյս տեսաւ նիւթեօրքի «Կոշնակ Հայաստանի» մէջ:

3) «Խրատ» անտիպ է:

4) «Մեր ասկեն», լոյս է տեսել նիւթեօրքի «Նաւասարդ» հանդէսում:

5) «Գրիշ», լոյս է տեսել 1874 թիւն, «Սիօն»-ի (թիւ 10, էջ 226) մէջ, տպա հրատարակւել է 1911 թիւն, Տր. Եպ. Պալեանի «Հայ աշուղներ»-ի [Ա. հատոր, էջ 264] մէջ: Յիշեալ հրատարա-

կութիւնների մէջում և 6-րդ աննըլը պակասում են:

✓ 6) «Սուտ քարեկամա», անտիպ է:

✓ 7) «Խաղ ի վերայ Կալկաթոյ», անտիպ է:

8) «Երգ Բանզալայի», անտիպ է:

Այս երգերով Արդունին հանդիսանում է իրեն էպազի գպրոցի աշուղ, նրան հետեւող և աշակերտող:

Իրենց բովանդակութեամբ կրօնա-խրատական են այդ երգերը, որոնց մէջ երգիչն արտատագին ողբում է իր մեղքերը, ցոյց է տալիս պանդխտութեան ծանր և թշւառ կողմերը և նկատում իր ժամանակի հայ կեանքի տխոր պատկերը:

Դրանցից ուշագրաւ է „Մ'եղայ Տէր“ խորագրով քերթւածը, որի մէջ երեսում է անկեղծ և խորը կրօնական զգացմունք: Երգիշն իր աշքերի տռաջն է պատկերացնում անցեալի կհանքն և զգում է իրեն մեղքերի ծալի մէջ, ապա ահաւոր «զատաստանը» միտքերելալ՝ արտատալից և ջերմ հայցւածքներով դիմում է Սատուն և թողութիւն է հայցում իր այն մեղքերի համար, որ գործել է «համայն մարմնով».

Աշօքս մեղայ՝ ինչ որ տեսի ցանկացայ:

Աշխալս տւին ինձ՝ դեռ շըկուշտացայ.

Իմ անօրէն մեղքն՝ մին օր չըլացայ,

Մեղա Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:

Արժէքաւոր մի կտոր է նաև Արդունու «Ղարիպ տեղ նաւ չաղ ամ» քերթւածը, որն աշքի է ընկնում իր պարզ շաբայարութեամբ և անկեղծ շեշտովլը:

Ղարիբի ողբերգական կեանքը շատ հին ժամանակներից սկսած երգել է հայ զրականութեան մէջ: Իսկ մեր ժողովրդակա՞ն աշուղական զբականութեան մէջ բազմաթիւ էջնք կան նիրաւած պանդխտութեան, որոնց մէջ կենդանի գոյներով գծւած է զարիբի սրտաձմիկ և յուղիչ պատկերը. «Կոռունկ ուստի կուզաւը» այդ՝ պիսի սրտառուչ կառներից մէկն է:

Արդունին էլ կրել է պանդխտութեան գաւնութիւնները, ճաշակել է զարիպի լեղի հացը և ստեղծագործութեան նիւթեալու պարձել իր զարիպ կեանքը:

Նա ծանր կերպով հիւանդանում է զարիպ երկրում և զգում է, որ պիտի մեռնի, ուստի ծնբագիր զիմում է Աստծոն, խոստովանում իր ծով մեղքերը և թողութիւն է աղերսում.

Ղարիպ տեղ նաշաղ ամ՝ հալս փէրիշան,

Քանի որ կենդան ամ՝ մեղայ Սստուծոյ,

Սուրբ եկեղեցի, քահանայ շիայ,

Տէր քեզ խոստովանեմ՝ մեղայ Սստուծոյ:

Թէ Արդունին իր կեանքի մի մասն անցկացրել է օտարութեան մէջ այդ երեւում է նաև նրա երկու այլ ոտանաւորից: Ասպէս նա եղել է Կալկաթայում: «Խաղ ի վերայ Կալկաթոյ» խորագրով քերթւածն արգէն շեշտում է այդ հանգամանքը: Նա եղել է նաև Բանգալայում և մի որոշ ժամանակ ավրել է այնտեղ:

Բանգալայի և նրա ժողովրդի մասին հիւսած երգը վկայում է մեր ասածը: Ճիշդ է, որ յիշեալ ոտանաւորները գեղարւեստական աղթէր չունեն, բայց հետաքրքրական են և կարեսը ազգագրական տեսականիցից:

Ուշագրութեան արժանի է նաև Արդունու «մեր ասկն յիմարացէլ ան» վերնագրով երգը, 50 տուն, որի մէջ երգիշը մերկացնում է և մտրակում ժամանակակից հայ կեանքի թերութիւններն ու պակասութիւնները: Ահա մի քանի կտը.

Մեր ասկն յիմարացէլ ան,

Զոտով փշանալ ան ուղում,

Ուրախութիւն, ոէր թողել ան,

Ցիրուր գլուխ լալ ան ուղում:

Քոիցր լեզվով յիլուր խարում,

Զեջլով մինդ մինու կապում,

Ցիրուր գլուխ կրակ թափում,

Երգել, ոէվանալ ան ուղում:

Ժամանակաշրջանը: Այժմ մի հարց է ծագում, ինչպիսի ժամանակաշրջանի մէջ է ապրել Զուլ Արդունին: Եշուղի կեանքի հետ պատմական լոյսով ծանօթանալու համար կարժէ ուսումնասիրի այդ պատմաշրջանը:

\*) Անտէպները գտնում են մեր ձեռագրի մէջ և առաջին անգամ են պահպանում:


1650-1734 թւի ժամանակաշրջանն է դա: Ազդ դարը, ինչպէս առել ենք, նոր-Զուղայի ամինափայլուն շրջանն է կաղմում: Սյդ շրջանին է, որ նոր-Զուղայում սկիզբ է դրուում գրական, դպրոցական և տպարանական եռանդուն գործունէութեան: Նոյն շրջանին էլ ծաղկում են նոր-Զուղայի վաճառականութիւնն ու արհեստները: Զուղայեցի հարուստ վաճառականներն արհամարհելով աշխարհագրական տարածութիւնները, շրջաւմ են աշխարհից աշխարհուն Առևտրական գործերը տանում են նրանց չնդկաստան, Երաբստան Իտալիա, Հոլլանդիա, Փրանսիա, Ռուսաստան և այլ տեղեր: Նրանք պարագում են մարդարարի, մետաքսի, գոհարեղինի և ազնիւ ցփով առևտուրով և կարճ ժամանակի մէջ ահազին հարստութիւն են դիզում, ստեղծում իրենց համար նախանձելի, բարեկեցիկ զբութիւն և մեծ անուն ու հեղինակութիւն ձեռք բերում: Նոյնիւն նրանք մի թանկագին գահ են նւիրում ուսւաց ցարին, իսկ նոր Զուղայում կառուցել են տալիս փառաւոր ապարանքներ, զարդար արելեան ճոխութեամբ, գեղեցիկ ծաղկանկարներով և գեղարւեստական պատկերներով: Այդ ապարանքներում հիւրասիրուու են Պարսից Ճահերը, Նահանգապետներն ու խաները:

Սյստէօ' նոր-Զուղան, շնորհիւ ճարպիկ հայ վաճառականների, դառնում է հարուստ և փարթամ մի բաղաք: Ստկայն այլ զբութիւնը երկար չի անում: Մի քանի գժբախտ հանգամանքներ քարոյրում են հայ վաճառականների անտեսական վիճակը և Զուղան մատնում է ծալրայիդ թշւառութեան: Ահա այդ անցքեր պատկերը:

1650 թւին եղիւաները մտնում են նոր-Զուղա և հիմնում մի վանք և գպրոց: Փրանք գտանափոխական պրօպագանդայքարողիչներն էին: Նրանց պարագլուխը՝ Յակոբ Վիլլու լուսաւո՞շական հայերին կաթոլիկ դարձնելու համար ամէն հնարք գործադրում է: Նոր-Զուղայի ժամանակակից Ստեփանոս եպիսկոպոս և Ամենափրկչեան վանքի միաբաններից Յովհաննէո Մրգուզ և Ալեքսանդր գործադրում է վաճառական պատմութեամբ, որ հայերից շատերն առ երես չեն: ուրանում, այլ ընդգրկում են պարսից կրօնը: Նրանք արժանանում են մեծամեծ պատիւների և բարձր աշխատանքների ու աղղեցիկ դիրք ձեռք բերում: Ստեփանոս են Ամենափրկչանացացացած քրիստոնիայի տիպերը, որոնք կեանքում առաջ մի պարունակութեամբ, վաշխառութեամբ, կաշառակիրաթեամբ և որ յանդին է, իրենց հայազգա-

են առաջնորդի կողմբ: Եւ ահա սկսում են ներքին կատաղի անմիտ երկպառակութիւններն ու փոթորիկները: Հակառակորդ կրղմերը մատնում են միմեանց, միմեանց ամբաստանում և միմեանց տապակելու համար ահազին կաշառքներ են տալիս կառավարութեան: Թշնամութիւններն ու ատելութիւններն այն աստիճանի են համար, որ Ստեփանոս առաջնորդը հոգեորականներով և սկացրած մոմերով գուրս է գալիս նոր-Զուղայի հրապարակը և ժողովրդի առաջնորդութիւններին... Կրօնական այս անմիտ երկպառակութիւնները քար ու քանդ են անում գաղթականներով և սովորված մոմերով գուրս է գալիս նոր-Զուղայի հրապարակը և ժողովրդի առաջնորդութիւններին:

Բայց այս խոռովութիւնները նոր-Զուղայի հայերի տպուապանքների սկիզբն էին: Նրա առաջ աւելի սկզբ ու ըստ են բացում, երբ 1694 թւին, Զահ Սլուէլմանի մահից յետոյ, Երանի գահի վրայ նստում է Նրա սրգին՝ Զահ Սոլթ ան-Հոսէյնը: Դա կրօնամուլ, մեղկութոյլ մի թագաւոր էր, որին շրջապատել էին ֆանատիկոր և կաշառակեր կրօնատորները: Ողորմելի և ապիկար Զահը գործում է Նրանց ծրագրով: Նա ոչ միայն ծանր հարկեր է զնում իր հապակ ժողովրդի վրայ, այլ և աշխատում է Նրան կրօնափոխ անել: Այդ միաբան մէջ յղացնում են եղուիանները: Եւ ահա բացում է բարոյական այլամերման մի նոր շրջան և այդ օրւանից էլ սկըսում է Զուղայի աւելումը: Զահի սալրասից՝ կրակապաշտ պարսիկների [գերաբների] մի մասը, որոնք բնակում էին նոր-Զուղայի հարաւային թագում [այժմ կոչում է Հոսէյնարազ], ընդունում են մահմեդականութիւնը: Այնուհետ և Զահն առաջարկում է հայերին կրօնափոխ լինել: Պարսից պատմութեան մէջ մի անգամ ես կրկնըսում է Յակոբիրափ քաղաքականութիւնը, բայց այս անգամ այն տարբերութեամբ, որ հայերից շատերն առ երես չեն: ուրանում, այլ ընդգրկում են պարսից կրօնը: Նրանք արժանանում են մեծամեծ պատիւների և բարձր աշխատանքների ու աղղեցիկ դիրք ձեռք բերում: Ստեփանոս են Ամենափրկչանացած քրիստոնիայի տիպերը, որոնք կեանքում առաջ մի պարունակութեամբ, վաշխառութեամբ, կաշառակիրաթեամբ և որ յանդին է, իրենց հայազգա-



կիցների գլուխն դառնում են կատարեալ պատուհաս նրանք, մոլուների թելադրութեամբ, ապօրինի ժառանգութիւն են պահանջում իրենց հարուստ ազգականներից և այդ նպատակով դիմում են ամէն տեսակ ստոր միջոցների, օրինակ, զբարարում են, թէ իսլամի կրօնը հայոյեց: Սրեկելքում հակառակորդին զժրախտացնելու համար մի սոսկալի զէնք է գա: Եւ ահա սկսում են սահածարձակ բանութիւններն ու հարստահարութիւնները: Կատաղած մոլլաներն ու ամբոխը թափում են խեղճ ամբաստանեալների վրայ և առանց քննութեան ենթարկելու՝ շղթայում են, գանակոծում ու գրաւում նրանց ամբողջ հարստութիւնը, շատ անգամ էլ ծխով շընչապատ անում: Սակայն այդ չէ բոլորը: Նոր օրէնքի համաձայնամետականացած հայը ժառանգում է իր մեռած քրիստոնեալ ազգականի բոլոր ստացւածքը: Եհա այդպիսի ապօրինի կեղեցում ներով նոր-Զուղայի մեծահորուստ հայերը վերջին աղքատութեան են մատնում: Նրանցից շատերը հարստահարութիւններից սարսափահար եղած՝ թողնում են իրենց օջախները և վախչում են օտար հորիզոններ, գլխաւորապէս դէպի չնդկաստան:

Այս սոսկալի հանգամանքների մէջ նոր-Զուղայեցինների գըլ խին պայթում է մի նոր փոթորիկ: Դա Մահմուդ Խանի արշաւանքը է, 1721 թին նա անարդել արշաւում է Սպահանի վրայ, առ պարում Շահ Հոսէյնին և տիրում է Պարսից գոհին: Նոր-Զուղայնապաշտպան է մնում մայդ արշաւանքի տուած: Սրինարբու բռնակալը նոր-Զուղայեցիններից պահանջում է, իբրեւ արեան փրկանք 70 հազար թուման փող և 40 գեղեցիկ աղջիկներ: Մահմուդի զի՞ն տորները յիշեալ գումարն ստանալու համար, սովոր գայլերի նմանինում են հայերի տները կողապառում, յափշտակում և անասի բարբարոսութիւններ են դործում:

Նոյն ժամանակաշանում մի զարհուրելի զրութիւն ստեղծում է նաև Սպահան նահանգի Փէրիա գաւառի գիւղացիութեամամբ: Փրկուն Խանը սրի է քաշում չորս գիւղերի-Մարզիկիրագիւղանի, Խոյգանի, Տաշքաշանի և չաղանի-բնակիչներին, այն պատճառ բանութեամբ, որ Աւղանների կատարած բոլոր ալիւնահեղութիւն

ների միակ պատճառը հայերն են և թէ նրանց Պարսկաստան բերել են նոր-Զուղայեցինները:

Սհա այսպիսի աղէտալի և սե ժամանակաշրջանում է ապրել Ղուլ Սրգունին, բայց մեր ձեռքքում գտնուած երգերի մէջ չկան այդ յուղի անցքերը նկարագրող երգեր: Ուրեմն նա չի երգել իր ժամանակաշրջանի աղէտները: Թերնս նրա կրոսուած երգերի մէջ են գանւում այդ տաղերը: Եյդ հարցը կըպարզեն ժամանակը և բանասիրական պրապառմները:

Հեղուն եւ ոճը: Արգունու լեղուն բաւական ւաքուր է: Քրւած է նոր-Զուղայի ժողովրդական լեղուով, այնպէս որ նոր-Զուղայի բարբառն ուսումնասիրելու համար արժէքաւոր մի ատաղձ է այդ լեղուն: Նրա ոճը իր ժամանակի միւս աշուղների պէտ պարզ է և սահուն: Սփսոս միայն, որ նա իր երգերի մէջ խառնել է իր ժամանակին յատուկ և հասկանալի պարսկերէն բառեր, որոնք այսօր զժւարահասկանալի են դարձնում քերթւածները: Սակայն զրանով հանդերձ նրա երգերը կարդացում են առ անձին հաճոյքով:

### Պատառիկներ Ղուլ Արգունու երգերից

#### 1. Մեղայ տէր

Ի սուրբ աւաղանէն՝ չուր այսօր վմայ ինձ,  
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն,  
Եօթն մահացու մեղք բոլորն զոյ ինձ,  
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:

Գլխովս մեղայ՝ հպարտ ամ կացէլ,  
Փուռն եկեղեցւոյն՝ թողէլ, անց կացէլ,  
Քնացէլ չեմ իսոսառվանէլ, զղացէլ,  
Մեղայ տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:

Աչօքս մեղայ՝ ինչ որ տեսի ցանկացայ,  
Աշխարհս տվին ինձ՝ դեռ չրկուշացայ,  
Իմ անօրէն մեղքն՝ մին օր չըլացայ,  
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:

Սկանջովս մեղայ՝ շինէլ չարի բուն,  
Սկանջ ամ ես դրէլ՝ օր չուր երեկոյն.  
Պայծառ հոգիս մթնէլ՝ դարձէլ սկագոյն,  
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:  
  
Քնթովս մեղայ՝ քաշէլ անոյշ հոտ,  
Յորտեղ որ տեսէլ ամ նաշաղ ու բորոտ,  
Խիալ ամ տարէլ, չեմ գնացէլ մօտ,  
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:  
  
Իերանովս մեղայ՝ քուֆը, յուշունց տալով,  
Սուտ բամբաս ասելով, կուրս պտուտ գալով.  
Ճաբաթ չուր Կիրակի անժամ կինալով,  
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:  
  
Հար սրտովս մեղայ՝ շատ սիրտ ամ խոցէլ,  
Սուտն արտորդ ամ շինէլ՝ աշխարհս լցէլ.  
Տասն պատգամք թողէլ, ինձ ամ կորուտէլ,  
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:  
  
Հար մտքովս մեղայ՝ զնացէլ մոլոր,  
Աէվ թօռն ամ շինէլ՝ մէջն ընկէլ ոլոր,  
Իմ մեղքն բռնած ա աշխարհս բոլոր,  
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:  
  
Սրտովս մեղայ՝ հեռ, նախանձ ամ պահէլ,  
Յաւուր պատաստանիցի ես չեմ վախեցէլ.  
Քէնն օխց ամ շինէլ՝ շնրէս կախէլ,  
Մեղայ տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:  
  
Զեռօքս մեղայ՝ զրկէլ, քաշէլ ամ բերէլ,  
Մարմինս կրակ ամ շինէլ, խեղճ հսդիս երէլ.  
Պաք ու ծոմ շեմ պախէլ, շան նման կերէլ  
Մեղայ տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:  
  
Ոտօքս մեղայ՝ շար ճանապարհ գնացի,  
Անդպամ ման եկի, անյաղ շնացի.  
Վա՛յ ինձ ասանց բարի գործոց մնացի,  
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:

Համայն մարմնովս՝ մեղքում կորէլ ամ,  
Սշխարհիս չար բանէրն ողջ սովորէլ ամ.  
Քրիստոնէի կարգից ես մոլորվէլ ամ,  
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:  
  
Հոգիս թողի, փուշ մարմնոյս տուի ամակ,  
Իմ չար գործն չատ է, քան ծով ու ցամաք.  
Ո՞վ սուրբ Աստևծածին քեզ ունիմ քօմաք,  
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:  
  
Հայր, Որդի, Հոգի սուրբ, մի օրինակ ես,  
Ճշմարիտ կարող ես բանաս ու փակես.  
Ամենայն մեղօք՝ կապեալս արձակիս,  
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:  
  
Պատաստանն միտ բերի՝ նստայ ու լացի,  
Մեղաւոր Արքունիս խոստովանքս ասացի.  
Ինչ որ ունի թողի ու մերկ գնացի,  
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:

## 2. Ղարիբ տեղ նաշաղ ամ

Ղարիբ տեղ նաշաղ ամ,<sup>1</sup> հալս փէրիշան,  
Քանի որ կննդան ամ մեղայ Աստուծոյ,  
Սուրբ հկեղեցի<sup>2)</sup> քահանայ շըկայ,<sup>3)</sup>  
Տէր, Քեզ խոստովանիմ, մեղայ Աստուծոյ:  
Մեղայ քո ամենայն՝ սուրբ պատուիրանաց,  
Շատ միզք ամ գործել՝ ընդզէմ օրինաց,  
Հայր երինաւոր Աստուծած՝ ճար մեղաւորաց,  
Անդեղջ շմեռանիմ, մեղայ Աստուծոյ:

Տէր, իմ և Աստուծած՝ փառք քիզ գոհութիւն,  
Տներ ինձ զղում, բարի գործք և<sup>4)</sup> արքայութիւն,  
Իմ անօրէն մեղացս<sup>5)</sup> շնորհան թողութիւն,  
Մեղացս փոշման ամ, մեղայ Աստուծոյ:

1) Ծբէատ եպ, Պալհանի «Հայ աշուղնիը»-ի և մեր ձեռատեսքի տար բերութիւններն են՝ 1) հմ, 2) համ, 3) շըկան 4) չկայ, 5) մեղաց:

Մի թողուր զիս աէր՝ ձեռաց Աշի քոյ,

Վասն սրբոյ անարտաի լսաշի քոյ.

Հայր մեղայ յերկինս և առաջի քոյ,

Թողութիւն գտանեմ, մեղայ Աստուծոյ:

Գոչեմ մեղայ, աէր իմ Սստուած ողորմած,

Բարերար, բազում ողորմ<sup>1)</sup> և զթած.

Մեղաւը Ծրդունուս՝ անւր հոգեսը հաց,

Հետս պաշար տանեմ, մեղայ Աստուծոյ:



### 3. Խըռատ

Խըռատ սի քեզ առամ սիրելի հղբայր,

Դորն որ գնաօ՝ խելքէ պախիր զու.

Նամարդի հետ շնստնս մէջլիս և սօհբաժ,

Հախիրն մին օր բէկնամ կառի, վրախիր զու:

Վատ մարդն քեզ հետ մի գցել ինատ,

Որ նա չի ճանաշում օրէնք և հաւատ.

Էնաեզ նստիր, որ տան քեզ իրատ,

Ռոկէ զինտ շինիր, անկճէտ կախիր զու:

Քանց քեզ մեծին խոնարհ կացիր,

Ամանչիր, խելօք մարդի ծառայիր.

Ռան պաշիր, խօսին ա ջուահիր,

Ռոտեզ առեոդ լինի, տեղն ծախիր զու:

Տղամարդ կացիր ըղբար ու շարթի,

Դոր փուշն բիզարար կայ մէջ ծառի վարզի.

Ինչ որ կասես, թէ չոս խարցանել մարդի.

Կղալատես, կփոշմանես հախիրն դու:

Ղուլ Արդունուս թէ կանես զաբուլ,

Մեծ ու պստիկ քեզ կասին մազուլ.

Որտեղ տեսնես բազնաֆաս, չզուլ,

Հալբաժ, հալբաժ դոստի շառես դու:

### 4. Մեր ասկն

Մեր ասկն յիմարացէլ ան,

Զուտօվ փչանալ ան ուզում.

Թւրախութիւն, սէր թողէլ ան,

Ցիրուր պլուխ լալ ան ուզում:

Զրէրանին լի որումն,

Խոր փորողն էլ խորումն.

Խովզագարն էս օրումն,

Թէգութեան աղբալ ան ուզում:

Թէղնամ էլէլ հնդստան,

Յամէն փուչ բան շինում գատաստան.

Լնկաման ան զիվան, դատաստա

Կ սիվ, զալմաղալ ան ուզում:

Էլզ ա, որ թագավոր, խան չեն,

Օտար ասկից ամանշման չեն.

Մինդմինու խոնարման չեն,

Փէրիշան մնալ ան ուզում:

Ճշմարիտ բանին չեն զարուլ,

Ինչ առօւմ ան նամազուլ.

Ց որ բահեզ տեսման բաղնաֆաս

Չըդուլ,

Խոտուրն միանալ ան ուզում:

Ընդունում շեն սօվզագարի,

Որ ճշմարիտ խօսի բարի.

Հնկամ ան ձեռն ասկ օտարի,

Փող խաղալ ան ուզում:

Երմագման չի էտոնց մանին,

Ենտեկում ան չար բանին.

Կորանց դառն դատած փողն,

Օտար ասկի տալ ան ուզում:

Մեծ ու պստիկ էլ ու ֆանդում,

Կովել է մին մաղի բանդում.

Նահան յիրուր տուն ան քանդում,

Դառն ախքատանալ ան ուզում:

Պղջ բացէլ ան կովի բազար,

Դոնէ կուռ չինում մանդար.

Խէրուրն թարգմանում զղաթ,

Հոգի ուրանալ ան ուզում:

Համէքն նստէլ ան մին պուճախում

Սուտ-մուտ գիր ան շինում.

Պախում կոիվն մինդմին ու ծառ-խում,

Համիշայ ջնջալ ան ուզում:

Յեփ դատաստան ան գնաման,

Ցիրուր աբս ու շարմ ան բաման.

Սոդոմայ քաղաքի նման,

մին էլ յետ միանալ ան ուզում:

Կուտումն յիրուր պըպտում,

Աետարան ան խորտում.

Ճշմարտութիւնն ստըտում,

Սատանաց խաղալ ան ուզում:

Գոմչի նման ունին կողն,

Ցիրուր գլխի տալման խողն.

Ուրենց դառն դատած փողն,

Օտար ասկի տալ ան ուզում:

Եփսոս չէր զոլման ձեր փողին,

Զուր յեփ վազ տէր գուռ գողին.

Ճշմարիտ մէկն խօսողին,

Ցիրան կաղած լալ ան ուզում:

Հում ճանանչում չէք էդ դուռն,  
Որ ջոկեն ձեր մեկն, ծուռն.  
Գանակն խասէլ սակուռն,  
Դեռ նոր յիմանալ ան ուզում;  
Ովշաբմ ունի՝ ասում ան ախմախ ա,  
Ճառն լեզվէրանին կախ ա.  
Բոնում մինզմինու եախայ,  
Դոնէ դուռ ման գոլ ան ուզում  
Քոլցցը լեզվօվ յիբուր խարում,  
Զեջով՝ մինզմինու կապում,  
Յիբուր գլխի կրտկ թափում,  
Երվել, ոչվանալ ան ուզում;  
Ման ան գոլման ամեն տեղ,  
Ուրէնց նշանց ան արման անմեղ,  
Ցորտեղ մտման ան քաղաք ու գեղ,  
Քանդեն ավալ ան ուզում;  
Միթէ ուրէնք յիմաման չեն,  
Մինզմին լէվ կունահաչեն.  
Ուրէնց շարմին ավսոսման չեն,  
Խալխի մօտ բանալ ան ուզում;  
Մին կուպատահէր դղար տարէն,  
Հալ տեսման ամ խինգ տարէն.  
Աշկարայ սանադ դժատարէն,  
Հալայ յետ դաշտանալ ան ուզում;  
Խալալ-խարամն յիմանան չեն,  
Ճշմարտութիւնն զոր ճանաչն.  
Վերջումն ամանչման չեն,  
Ախ քաշել, տկալ ան ուզում;  
Յուսաման ան այլ ասկ օտարի,  
Մինզ մինու տալման քարի,  
Օվ ճշմարէտ խոսք բարի,  
Վերջումն ամանչման չեն;  
Վերջումն ամանչման չեն,

Քինում ան ծուռ ու գերան,  
Մինզմինու խում-խում կերան,  
Հուր ընկան այլ ասկի բերան,  
Դառ էլ չիմանալ ան ուզում  
Մինզմին գձում կըտի.  
Սիրչորաց տալման ոտաց տակ,  
Ծիծաղել, ինդալ ան ուզում:  
Յերեսախան քոխցը, խամեղ,  
Մեծ բարեկամ գառնան անմեղ.  
Հուր վերջումն գձեն մին նեղ տեղ,  
Նսակ սուռ հոգալ ան ուզում:  
Մարթ խաբում, քոխցը բերաւ,  
Հուր տասն մատ մոմ շինում.  
Վերջումն ամակ փուչ տն տռում,  
Դառ մնաթ բանալ ան ուզում:  
Հին վազման ա բոչին գողին,  
Անդամ ուտաղ, խմողին.  
Ասկի լէվութիւն առողին,  
Ամակն ուրախանալ ան ուզում:  
Աչկէրանիտ դրիսս բացէք,  
Հեր դօստ ու դիշնամ յիմացէք.  
Հորաեղ չար կայ՝ հերկար կացէք,  
Գրուց գոզանալ ան ուզում:  
Յաղնամք վազման յամէն բանում,  
Կուրում էլ ուր ասկի անում.  
Երկու կողմէ որում ցանում,  
Կովի ձգանալ ան ուզում:  
Մարթ կայ հէնց ա սառած կա-  
րին,  
Տակախան ունի մուռտար կիճ.  
Բերանն աշխար սպանիճ,  
Լեզվիցն արուն կթալ ան ուզում:

Մահ ան գոլման սուռ-սուռ զավի,  
Քրէր խանում անիբավի.  
Որդում ուտում նման վլաւի,  
Կանուխ խօչանալ ան ուզում:  
Օխցի չար ճերմակ կաթնում,  
Ուրէնց արվեստն յագնումն,  
Դոխտիկ ախրօրաց մատնումն,  
Բիսրաը հաֆալ ան ուզում:  
Տակախան թուր, դանակ սրում,  
Տասն քօթէն կարում, բորում.  
Յերեսախան սուռ-սուռ ջրում,  
Տես զվարթանալ ան ուզում:  
Այլ ասկն էնդուր զօրաման,  
Որ յիբուր արուռ կին բաման.  
Մեղնէ թէ մինն վէր ա լնկաման,  
Ողջ ուրախանալ ան ուզում:  
Ինչ ասկ բերինք մեղ օրինակ,  
Էնդուր ան մնացէլ անտէր,  
Որ մինզմինու հետ չուննն սէր.  
Թէ մինն գառման ա փողատէր,  
Տըտմել, սպալ ան ուզում:  
Ապակէլ ան, զօր մին մազան,  
Յիրուր տուն քանզէն վասպան,  
Հէնց ան գացէլ գուլ ու գազան,  
Մինզմին որսալ ան ուզում:  
Բնկիրաման ան խետ գոպին,  
Բանկասում ան ուրէնց ծնողին,  
Պատմառ դնում կարդացողին,  
Տըտում կոկծալ ան ուզում:  
Յամենքն մնի թեզօվ թաշում,  
Հուր ան կապում խեմքէր դո-  
ջում.

Տամն գրուց, վերջումն  
Եռլանալ ան ուզում:  
Մտածում չեն հողի տալն,  
Դժոխի դասն տանջանքն.  
Ճարայն մին հիա ժամ գնալն,  
Դառ թարալանալ ան ուզում:  
Դատաստանի օր չեն լուման,  
Ընդէմ պատվիրանի կալման,  
Վարդապետ քարող տալման,  
Չըլսել, խուլանալ ան ուզում:  
Գրեշի, ժամի չեն լսում,

5. Գրիչ<sup>\*</sup>)

Գրիչն զովեմ՝ մին զամիշ ա,  
Պատզն պատուական եմիշ ա.  
Զեսնումդ պախիր համիչայ, <sup>1</sup>  
Ռոկով բանած <sup>2</sup> մօհրի <sup>3</sup> նման.  
Գրիչն ինըն զուարթ ա,  
Սնուշախոս <sup>4</sup> կարմիր քարդ ա.  
Ո՞վ կարող ա զրի, կարզայ,  
Պիտի պախի փրի նման:  
Գրիչն պիտի պախեն զարթուն,  
Հեն բաց թողուն մնայ ՚ի քուն,  
Մին զոստ կը քանդի մարդի  
առն,  
Ու փուլ կածի կրի նման;  
Գրիչն հէնց տիլալ հրեշտակ,  
Տնէր չուս կըտայ տակէ տակ. <sup>5</sup>  
Իւրին կը քաշի մին <sup>6</sup> որմատակ. <sup>7</sup>  
Աներեսյթ որի նման:  
Գրիչն ինքն սւի չափն,  
Հոի խաբուս, կտայ խաբն.

\* ) Տրդատ եպ, Պատեանի ոչու առողինը՝ և մեր ձեռապը էտկան  
տարբերութի ննիրն են. 1) չամիշա, 2) թանած, 3) թըհրի, 4) Անուշահաթ  
5) Տալվետակ, 6) 2կայ, 7) Թըտամակ. 8) ի տուրի, 9) Նըհալս, 10) Թայի  
11) Բէրուշան.

Դառնաման ան օվ մէկն առում  
Նստիան ան, յիրուը բամբասում  
Յւրեմն վերջանալ ան ուզում:  
Համէնու միխի ուրնէն ա կախ,  
Մտածում չեն զատասատն, մախ  
Ում տեսման ան Սստուածավախ  
Կոկիծ դառնալ ան ուզում:  
Ղուլ Արզունի քո միխին լոց  
Պարտական իր, տվիր յիմաց  
Ինչ առում ան՝ զէմ օրինաց  
Գեռ զրախտ գնալ ան ուզում:

Թէ որ զձի իւր հափն,  
Կուտի շամիչ ջրի նման:

Գրիչն մարգարիտ կարժի,  
Միշտ կուղի քաղաթ շարժի.  
Ով որ կամենայ լուտ վարժի,  
Կրի, կարդայ ջրի նման:

Գրիչն բանդ ա մին մազի,  
Ո՞վ որ խառուն <sup>8</sup> չսազի,  
Նահալս <sup>9</sup> դէս ու դէն կըվազի,  
Մին ախմախ զզրի նման:

Գրիչն աշխարհ շափող ա,  
Համ սովզագար ա, համ գող ա.  
Ինչ ձեռնէն վեր զոյ <sup>10</sup> կարող թ  
Թագաւոր, վէզրի նման:

Գրիչն յեփ փէրիշան <sup>11</sup> ա, <sup>12</sup>  
Զոր զամբարն վատ նշան ա.  
Ընկերացէ կը բաշտայ,  
Կըմնայ ֆազըրի նման:

Գրիչն ընկեր ա խետ <sup>1</sup> գողի,  
Կամբարով աշխարհ կաջողի  
Հոգի կտայ սին նազդ փաղի,  
Մին զալում բեաֆէրի նման:

Գրիչն որքան որ մաշի,  
Հէնց ա քեազագանի կաշի,  
Ընչուր վերայ որ կը զի <sup>2</sup>  
Կըկալի պանրի նման:

Գրիչն դժուռ կը համերի,  
Կիշեր, յերէկ պիտի զրի.  
Յնի բարկանա՝ ծէրն որի,  
Կեարզան կըտայ թրի նման:

Գրիչն յեփ երիշ փոխէց,  
Մին զօսան տեսիր ճմոխէց.  
Ջլինքն բանեց, տակն կոխէց,  
Մին կատաղած շըի նման:

Գրիչն <sup>3</sup> օվ կըտայ ամակն,  
Կը սալորի սե, ճարմակն,  
Սարէր զձիս զբչի տակն,  
Կըփչի ալրի նման:

Գրիչն Արզունի, մըգամ դու մվ ես,  
Գիւ հմար ա չուր բան սովորես  
Եթէ աշխարհս ողջ զովես,  
2ի խասաման զըչի նման:

6. Սուտ բարեկամ

Երեսական գօսակի ունես,  
Տակալսան խասիաթդ վատ ա.  
Ոլչափ որ ոլոմ կցանես,  
Էլ հախիրն աղբաթդ վատ ա:  
Օխցի նման ունես նազար,  
Ում խասաման աս, տալման աս շար  
Միծ ու պստիկ ձեռնէդ բէզար,  
Լարս ու մարիփաթդ վատ ա:  
Էսօր որ լուս մին զրուց,  
Հարիւր կշինես մինչ հեկուց.  
Լաւ էր, որ չեր ծնեալ մօլուց,  
Խարամի կերած կաթդ վատ ա:  
Ես հէնց զիտի մարդ իր մազուլ,  
Աշկարայ զան աս և գողիկ զուլ:  
Քերանդ աւեր ի սուտ, սղալ,  
Լիզուտ արարաթդ վատ ա:  
Սուտ բարեկամ, Յուզա մատիչ,

1) Հետ, 2) Կըփաշի, 3) Գրիչըն, 4) Նուր:

Մկան նման ապականիշ,  
Սրինդ պիղծ, զաթդ վատ ա:  
Հէնց աս դու՝ ֆալս շինած դալր փող,  
Կեղծաւոր աս և մարդ խաբող.  
Եդ չար բնութիւնդ թարգիր, բաց թող,  
Սովորած խասիաթդ վատ ա:  
